

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

« 6 » ապրիլի 2020թ.

№ 115 -Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՕՋԱԽՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆԵԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ԵՎ ԱԼԳՈՐԻԹՄՆԵՐԸ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 14-րդ ենթակետը, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) դեմ պայքարի միջոցառումներն իրականացնելու նպատակով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Արցախի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման նպատակով՝ օջախների, հանրային սննդի օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների ուղևորների փոխադրման ավտոտրանսպորտային միջոցների ախտահանիչ միջոցառումների իրականացման մեթոդական ուղեցույցը և ալգորիթմները»՝ համաձայն հավելված N 1-ի:

2) «Անհատական պաշտպանության միջոցների ռացիոնալ օգտագործման մեթոդական ուղեցույցը»՝ համաձայն հավելված N2-ի»:



Ա.ԲԱՂՐՅԱՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՕՋԱԽՆԵՐԻ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ենթակայության և անկախ կազմակերպական-իրավական ձևից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն), ինչպես նաև նոր կորոնավիրուսային վարակի (**COVID-19**) դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման, իրականացման ու գնահատման գործընթացներին մասնակցող բժշկական կազմակերպությունների մասնագետների համար:

2. Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկությունների հիման վրա, որոնք կարող են փոփոխվել (թարմացված տեղեկատվությունը/առաջարկությունները տես՝ www.who.int պաշտոնական կայք էջում):

3. Կորոնավիրուսը վիրուսների առանձին ընտանիք է, որն իր մեջ ներառում է 2 ենթաընտանիք՝ ներառելով 40 տեսակ: Դրանք վարակում են մարդկանց, թռչուններին, կովերին, խոզերին և նապաստակներին: Վիրուսն առաջին անգամ հայտնաբերվել է 1965 թվականին: Կորոնավիրուսներով առաջին անգամ լարված համաճարակային իրավիճակ արձանագրվել է 2003-2004թ.թ.՝ պայմանավորված ծանր սուր շնչառական համախտանիշով կամ ատիպիկ թոքաբորբով (SARS CoV, sever acute respiratory syndrome) և 2011-2012թ.թ.՝ Մերձավոր արևելքի շնչառական համախտանիշով (MERS CoV, Middle east respiratory syndrome):

4. Վարակի փոխանցման մեխանիզմներն են՝ օդա-կաթիլային, շփումային, ֆեկալ-օրալ:

2. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

5. Նոր կորոնավիրուսներով առաջացած վարակների կանխարգելման և դրանց դեմ պայքարի նպատակով իրականացնում են կանխարգելիչ և օջախային (ընթացիկ, եզրափակիչ) ախտահանում:

6. Ախտահանման նպատակով կիրառում են ախտահանիչ միջոցներ՝ համաձայն ախտահանիչ միջոցի կից մեթոդական հրահանգի (ախտահանման ռեժիմներ՝ վիրուսային վարակների ժամանակ):

7. Ախտահանման համար կարող են կիրառվել միջոցներ տարբեր քիմիական խմբերից.

1) քլորակտիվ (դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ՝ աշխատանքային լուծույթի մեջ ակտիվ քլորի առնվազն 0,06% խտությամբ, քլորամին Բ՝ աշխատանքային լուծույթի մեջ ակտիվ քլորի առնվազն 3,0% խտությամբ),

2) թթվածինակտիվ (ջրածնի պերօքսիդ՝ առնվազն 3,0% խտությամբ),

3) կատիոնային մակերեսային ակտիվ նյութեր (ԿՄԱՆ)՝ չորրորդային ամոնիումային միացություններ (աշխատանքային լուծույթի մեջ առնվազն 0,5% խտությամբ), երրորդային ամիններ (աշխատանքային լուծույթի մեջ առնվազն 0,05% խտությամբ), գուանիդինի պոլիմերային ածանցյալներ (աշխատանքային լուծույթի մեջ առնվազն 0,2% խտությամբ),

4) սպիրտներ (որպես մաշկային հականեխիչներ և ախտահանիչ միջոցներ ոչ մեծ մակերեսով մակերևույթների մշակման համար՝ իզոպրոպիլ սպիրտ առնվազն 70% խտությամբ ըստ զանգվածի, էթիլ սպիրտ առնվազն 75% խտությամբ ըստ զանգվածի): Ազդող ախտահանիչ միջոցների պարունակությունը նշված է կիրառման հրահանգների մեջ:

8. Ախտահանման ենթակա են ուղևորների ժամանման, ինչպես նաև ուղևորների և բեռների սպասարկումով զբաղված օդանավակայանի անձնակազմի համար նախատեսված սենքերի բոլոր մակերեսները, կահավորանքի պարագաները, պատուհանագոգերը, մահճակալների թիկնակները, հարմահճակալային պահարանները, դռան բռնակները, հիվանդի սպասքը, խաղալիքները, արտադրությունները, օդը և այլ օբյեկտներ:

9. Կանխարգելիչ ախտահանումը.

1) Կատարվում է անկախ հիվանդության առկայությունից, նպատակն է ոչնչացնել արտաքին միջավայրում կուտակված հիվանդության հարուցիչները: Կանխարգելիչ ախտահանում կատարվում է առաջին հերթին մարդկանց կուտակման վայրերում (բժշկական կազմակերպություններ, կայարաններ, գնացքներ, նավեր, ինքնաթիռներ, մետրո, մանկական հիմնարկություններ, հյուրանոցներ, լողավազաններ, հանրակացարաններ և այլն):